

Կիսաճկունության գործակիցների վերլուծությունը փաստում է նաև, որ 2004-08թթ. տնտեսական աճի ազդեցությունը աղքատության կրճատման առումով առավել ուժեղ էր Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի և Արագածոտնի մարզերում, որտեղ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի իրական աճի 1%-ը հանգեցրել է աղքատության մակարդակի միջինը 0.3 տոկոսային կետով կրճատման:

Համաշխարհային տնտեսության վերականգնման ներկա միտումները թույլ են տալիս ակնկալել համախառն պահանջարկի մեծացում, մետաղների միջազգային գների աճ և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների՝ 2009-ի համեմատ աճ: Այդ ենթադրությունների ներքո 2010թ. Հայաստանում ակնկալվում է 1.8% տնտեսական աճ<sup>7</sup>, որի պայմաններում սպասվում է աղքատության մինչև 26.1% մակարդակ:

Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի միջևաժամկետ տեսլականը ենթադրում է տնտեսության առավել կայուն կառուցվածքի ձևավորում, որը թեեւ ավելացված արժեքի բարձր աճեր չի արձանագրի, այնուամենայնիվ կլինի առավել առողջ, ընդ որում շինարարության՝ որպես տնտեսական աճի առաջնորդողի դերը կանցնի ծառայությունների ոլորտին:

Ելնելով տնտեսական իրավիճակի զարգացման ՀՀ ՖՆ, ինչպես նաև ԱՄՆ ներկա գնահատականներից՝ 2011-13թթ. սպասվող տնտեսական աճի արագացման պայմաններում 2013թ. Հայաստանին գրեթե կհաջողվի հատել թողարկման և աղքատության մակարդակների նախաճակատային՝ 2008թ. շեմերը: Իսկ դա թերեւս նշանակում է, որ 2010-13թթ. մեզ, լավագույն դեպքում, կհաջողվի վերադառնալ 2008թ. ձեռքբերումներին, որը, երկարաժամկետ հատվածում, Հայաստանի համար մեծ իմաստով տեսանելի որեւէ հեռանկար չի ստեղծում զարգացող / ձեռավորվող շուկայով երկրների խմբից՝ զարգացած տնտեսություն ունեցող երկրի փոխակերպվելու համար:

1. *Stu*՝ ՀՀ ԷՆ, Հայաստանի տնտեսական զեկույց 2009, Եր. 2009

2. Գնողունակության համարժեքն ըստ ԱՄՆ, <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2010/01/weodata/index.aspx>, հեղինակի հաշվարկներ

3. Dollar D. and A. Kraay (2002), *Growth is Good for the Poor*, The World Bank Development Research Group.

4. Bourguignon Francois (2003), *The Growth Elasticity of Poverty Reduction: Explaining Heterogeneity across Countries and Time Periods*, In T. Eichler and S. Turnovsky (eds.), *Growth and Inequality*, Cambridge, MIT Press.

5. <http://siteresources.worldbank.org/INTPGI/Resources/semi-elasticity.pdf>

6. Klasen S. and M. Misselhorn (2008), *Determinants of the Growth Semi-Elasticity of Poverty Reduction*, EUDN/WP.

7. *Lun* ԱՄՆ՝ *World Economic Outlook Database*, April 2010, <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2010/01/index.htm>

Բանկերի վարկային գործառնությունները ճգնաժամի պայմաններում վարկային բարձր ռիսկ են պարունակում, հետեւաբար՝ վարկային ռիսկի կառավարումը համարվում է բանկերի առաջնահերթ խնդիրներից մեկը և վարկային ռազմավարության անհրաժեշտ մասը:

Վարկային ռիսկը սահմանում են որպես վարկառուի կողմից հիմնական պարտքի և վարկային տոկոսների չվճարման ռիսկ կամ վարկային պայմանագրի սկզբնական պայմանների չպահպանման հնարավորությունը՝

Վարկային ռիսկ մեծացնող գործոնները հետեւյալն են.

✓ մեծ քանակությամբ գումար՝ տրամադրված վարկառուների նեղ խմբի կամ ճյուղերի, այսինքն՝ բանկի վարկային գործունեության կենտրոնացում մի ճյուղում, որը զգայուն է տնտեսության փոփոխությունների նկատմամբ,

✓ վարկային գործարքների մեծ տեսակարար կշիռ՝ կապված այն հաճախորդների հետ, ովքեր կրում են ֆինանսական դժվարություններ,

✓ բանկի գործունեության կենտրոնացում նոր, չուսումնասիրված ոլորտներում,

✓ նոր հաճախորդների տեսակարար կշիռ, որոնց մասին բանկը բավարար տեղեկություններ չունի,

✓ վարկային ազատական քաղաքականություն (վարկերի տրամադրում՝ առանց անհրաժեշտ տեղեկատվության առկայության և հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության),

✓ վարկի դիմաց համապատասխան ապահովվածություն ստանալու անհնարիություն կամ որպես գրավ այնպիսի արժեքների ընդունում, որոնք շուկայում դժվար իրացվելի են կամ շուտ արժեզրկվող,

✓ տնտեսական ու քաղաքական անկայուն իրադրություն և այլն:

Այսպիսով՝ վարկային ռիսկը կախված է արտաքին (տնտեսական իրադրության հետ կապված) և ներքին (բանկի սխալ գործունեության հետ կապված) գործոններից: Այնուամենայնիվ՝ վարկային ռիսկի կառավարման հիմնական քայլերը բանկի ներքին քաղաքականության ոլորտում են:

Վարկային ռիսկը կառավարվում է վարկային կենսացիկլի բոլոր փուլերում (վարկային քաղաքականության մշակում, հնարավոր վարկառուի հետ սկզբնական աշխատանքներ, բանկի նպատակների և հաճախորդի շահերի համակարգում, հաճախորդի վարկունակության գնահատում, վարկի որակական բնութագրիչների դասակարգում, վարկային մոնիտորինգ, խնդրահարույց վարկերի հետ աշխատանքներ, պատժամիջոցների կիրառում և այլն):

Վարկային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է ռիսկերի կանխատեսումը, դրանց հնարավոր չափերի ու հետեւանքների որոշումը, դրանց հետ կապված կորուստների նվազեցման կամ կանխման համար միջոցառումների մշակումը և իրականացումը: Այս ամենը ենթադրում է յուրաքանչյուր բանկի կողմից ռիսկերի կառավարման սեփական ռազմավարության մշակում և իրականացում:

Ճգնաժամի պայմաններում անհրաժեշտ է իրականացնել վարկային ռիսկի նվազեցման և դիվերսիֆիկացիայի ռազմավարությունները, այսինքն՝ բացառել վարկային բարձր ռիսկային գործառնությունները, իրականացնել վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիա՝ ապահովելով ռազմապահարաբերակցություն եկամտաբերության և հուսալիության միջև:

**Վարկային ռիսկի կառավարման հիմնական եղանակներն են.**

● Ռիսկից խուսափում, սակայն վարկային ռիսկից լրիվ խուսափել հնարավոր չէ, քանի որ այդ դեպքում բանկերը պետք է ընդհանրապես վարկեր չտրամադրեն: Բայց առանձին դեպքերում գոյություն ունի հնարավորություն՝ մերժել կոնկրետ հաճախորդի դիմումը և այս ձևով խուսափել հնարավոր ռիսկից,

● Ռիսկի կրճատում.

✓ ռիսկի նախնական գնահատման միջոցով. վարկի և տոկոսների չվճարման հավանականությունը բանկերը փորձում

են նվազեցնել հաճախորդի վարկունակության մանրամասն ստուգմամբ,

✓ ռիսկերի սահմանափակման միջոցով, ինչը ենթադրում է փոխառության գործառնությունների սահմանափակումներ՝ մասնավորապես.

-սահմանափակումներ՝ փոխառուների, գործընկերների գծով,

-երկրային եւ ճյուղային սահմանափակումներ,

-վարկի տրամադրման որոշում կայացնող բանկային մարմնի եւ պատասխանատու անձանց լիազորությունների սահմանափակումներ,

-վարկային պորտֆելի կառուցվածքի եւ ծավալի սահմանափակումներ,

✓ ռիսկերի բաշխման միջոցով, ինչը ենթադրում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի քաղաքականության իրականացում,

✓ ռիսկերի ապահովագրության միջոցով, ինչը ենթադրում է վարկերի ապահովագրություն, այսինքն՝ չմարման ռիսկի լրիվ փոխանցում ապահովագրական ընկերությանը,

✓ ռիսկը պայմանադիր կողմի (կոնտրագենտի) վրա տեղափոխելով, ինչը ենթադրում է վարկի բավարար ապահովվածության ներգրավում, որն ամբողջությամբ երաշխավորում է վարկի եւ տոկոսների վերադարձը,

✓ ռիսկերի հատուցման միջոցով. բանկերը, վարկային գործառնությունների ռիսկի հետ կապված, վարկի տոկոսադրույքի մեջ ներառում են հատուկ պարգևավճար՝ հնարավոր կորուստների մարման ռիսկի դիմաց,

✓ ռիսկերի բաժանման միջոցով, այսինքն՝ խոշոր վարկերի տրամադրում կոնտրոլիս հիմքով,

✓ վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստային ֆոնդի ձեւավորմամբ, եւ այլն<sup>2</sup>:

Ճգնաժամային իրավիճակներում բանկերը կարելի էր ենթադրել ռիսկի կառավարումը վերոնշյալ հիմնական եղանակներով իրականացնել ավելի արդյունավետ ու հետեւողական՝ անընդհատ իրականացնելով վարկային պորտֆելի ռիսկի գնահատում, սահմանափակումների կիրառման ապահովում, վարկային գործառնությունների դիվերսիֆիկացիա:

Վարկային ռիսկի կառավարման համար վարկերը եւ դեբիտորական պարտքերը (ակտիվներ) բաժանվում են 5 դասի, եւ դրանց գծով ձեւավորվում են պահուստներ՝ ըստ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ չափանիշների (տես՝ աղյուսակը)<sup>3</sup>:

Ընդհանուր պահուստը ձեւավորվում է ստանդարտ ակտիվների պահուստավորման դեպքում: Հատուկ պահուստը ձեւավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի եւ անհուսալի ակտիվների պահուստավորումից՝ ըստ աղյուսակում ներկայացված ցուցանիշների սանդղակի: Ընդ որում՝ պահուստավորման չափը բանկը որոշում է ինքնուրույն:

Ըստ ՀՀ ԿԲ ընդունած «Բանկերի վարկային ռիսկերի կառավարման մեթոդական ուղեցույցի»՝ ՀՀ առեւտրային բանկերում վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են բանկի ակտիվները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները եւ հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները<sup>4</sup>:

Վարկային ռիսկը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

$$ՎՌ = (Ա1-Պ1)*Ռ1 + (Ա2-Պ2)*Ռ2 + \dots + (Ա7-Պ7)*Ռ7,$$

որտեղ՝ Ա1, Ա2, ..., Ա7-ը բանկի ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք պակասեցվում են հիմնական կապիտալից), հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների եւ հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միեւնույն կշիռների, Պ1, Պ2, ..., Պ7-ը համապատասխան ակտիվների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների եւ հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների գծով հնարավոր կորուստների պահուստների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միեւնույն կշիռների, Ռ1, Ռ2, ..., Ռ7-ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով ԿԲ-ն սահմանել է վարկային ռիսկը սահմանափակող տնտեսական հետեւյալ նորմատիվները, որոնք պարտադիր են ՀՀ առեւտրային բոլոր բանկերի համար.

✓ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Լ 31), որը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20%-ը (այսինքն՝ մեկ փոխառուին կարելի է տրամադրել վարկեր (այդ թվում՝ ցանկացած այլ փոխառություն)՝ ոչ ավելի, քան բանկի ընդհանուր կապիտալի 20%-ի չափով),

✓ խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (Լ 32), որը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 500%-ը,

✓ բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը (Լ 4<sup>1</sup>), որը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 5%-ը,

✓ բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (Լ 4<sup>2</sup>), որը չպետք է գերազանցի ընդհանուր կապիտալի 20%-ը:

Այս նորմատիվները հաշվարկվում են ամսական կտրվածքով<sup>5</sup>:

Ճգնաժամի սկզբնական շրջանում ՀՀ առեւտրային բանկերը, հաշվի առնելով վարկային ռիսկը եւ դրսեւորելով զգուշավոր քաղաքականություն, դադարեցրել էին վարկային գործառնությունները կամ վարկեր տրամադրում էին բարձր տոկոսադրույքներով: Վարկային շուկան աշխուժացավ 2009թ. երկրորդ կիսամյակից, ինչին նպաստեցին ԿԲ-ի ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը եւ միջազգային մի շարք կազմակերպություններից վարկերի ներգրավումը:

# ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ**  
ՀՊՏՀ  
կառավարման ֆակուլտետի մագիստրանտ



## Ակտիվների դասակարգման չափանիշները և պահուստավորման չափերը

Ակտիվի դասը	Օբյեկտիվ չափանիշներ	Պահուստավորման չափը (%)
Ստանդարտ	Աշխատող ակտիվ է, պահպանված են պայմանագրի պայմանները	1-2
Հսկվող	Չաշխատող է մինչև 90 օր	10-15
Ոչ ստանդարտ	Չաշխատող է 91-180 օր	20-25
Կասկածելի	Չաշխատող է 181-270 օր	50-70
Անհուսալի	Չաշխատող է 271 և ավելի օր (բլանկային)	100

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ստանդարտ դասի (վավորակ) վարկերը կազմել են ընդհանուր վարկերի 92.6%-ը (տարբերակը՝ 95.6%), սակայն այլ երկրների բանկային համակարգերի վարկերի որակի համեմատ՝ այս ցուցանիշը բավական բարձր է եղել:

ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի կառավարման համար սահմանվում են ներքին մի շարք կորմատիվներ՝ կապված վարկավորման սահմանափակումների, ճյուղային դիվերսիֆիկացիայի, վարկային պորտֆելի որակի, վարկ/գրավ հարաբերակցության, ակտիվների գծով ձեռավորվող պահուստների չափերի, վարկառուների գծով ռիսկի առավելագույն չափերի հետ:

Ճգնաժամի պայմաններում վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը կնպաստի հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Զանի որ վարկային ռիսկի նվազեցման կարելու ու սկզբնական միջոցներից մեկը վարկառուների վարկունակության օբյեկտիվ գնահատումն է, առաջարկում ենք ֆիզիկական անձանց վարկունակության գնահատման ժամանակ կիրառել միջազգային բանկային պրակտիկայում լայնորեն կիրառվող սքորինգի մոդելը: Այն հիմնվում է վարկունակության գնահատման համար անհրաժեշտ գործոնների առանձնացման և դրանց բալային գնահատման վրա, ինչի արդյունքում ստացվում է ինտեգրալ ցուցանիշ, որի հիման վրա բանկերը որոշում են վարկ տրամադրել, թե ոչ, և ինչ գումարի սահմաններում: Իրավաբանական անձանց վարկունակության գնահատման ժամանակ, բացի ֆինանսական վերլուծությունից, անհրաժեշտ է իրականացնել նաև դրամական հոսքերի և գործարար ռիսկի վերլուծությունը բոլոր վարկերի համար, ընդ որում՝ գործարար ռիսկի վերլուծությունը ևս կարելի է իրականացնել սքորինգ համակարգի նման՝ առանձնացնելով հիմնական գործոնները և բալները:

- Ճգնաժամի պայմաններում, բանկերը պետք է մեծ ուշադրություն դարձնեն նաև վարկային օպտիմալ ապրանքների մշակման խնդրին: Դրանք այն ապրանքներն են, որոնք գրավիչ են նպատակային շուկայի համար և, մյուս կողմից, մակրոտնտեսական պայմաններում համապատասխանում են բանկի վարկային քաղաքականությանն ու օպտիմալ են վարկային ռիսկի ընդունելի մակարդակի տեսանկյունից: Այսինքն՝ վարկային ռիսկի կառավարման ժամանակ պետք է հաշվի առնել և՛ հաճախորդի, և՛ վարկային ապրանքի վարկանիշը:

- Իրականացնել սթրես-թեստավորում: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանման՝ այն իրենից ներկայացնում է մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության նկատմամբ վարկային պորտֆելի զգայունակության գնահատման մեթոդ: Այսինքն՝ սա վերլուծական գործիք է, որի միջոցով հնարավոր է որոշել, թե ինչպես է փոխվում վարկային պորտֆելի արժեքը՝ մակրոտնտեսական գործոնի փոփոխության հետևանքով: Սթրես-թեստավորման տեսակներն են՝ միագործոն (դիտարկվում է ռիսկի գործոններից մեկի փոփոխության ազդեցությունը վարկային պորտֆելի արժեքի վրա), և բազմագործոն (դիտարկվում են միանգամից մի քանի գործոնների փոփոխության ազդեցությունը), և այն են-

թաղում է հնարավոր սցենարների մշակում (պատմական, հիպոթեզային): Սթրես-թեստավորման մեթոդը լայնորեն կիրառվում է արտասահմանյան բանկային պրակտիկայում, և կարծում ենք՝ ճգնաժամի պայմաններում դրա կիրառումը հայաստանյան բանկերում կարող է բարձրացնել վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը:

- Իրականացնել վարկառուների հետեռոգական մոնիտորինգ՝ վարկերի մարման ուշացումներ թույլ չտալու և վարկառուների մոտ ի հայտ եկած ռիսկայնությունները շուտ բացահայտելու և անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար:

- Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը մեծապես կնպաստի ՀՀ առևտրային բանկերի կողմից Բազելյան համաձայնագրի (Բազել 2) դրույթներով սահմանվող սեփական ներքին վարկանիշավորման համակարգերի կիրառումը կապիտալի համարժեքության հաշվարկման նպատակով՝ վարկային ռիսկերի ծածկման համար: Վարկային ռիսկի գնահատման համար Բազել 2-ը առաջարկում է ստանդարտացված և ներքին վարկանիշավորման վրա հիմնված մոտեցում: Ստանդարտացված (Standardised) մոտեցումը նախատեսում է միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրվող արտաքին վարկանիշների կիրառման հնարավորություն, իսկ ներքին վարկանիշավորման վրա հիմնված մոտեցման (Internal Rating Based) կիրառման դեպքում վարկային ռիսկը հաշվարկելիս բանկերը կարող են օգտագործել փոխառուների վարկունակության իրենց գնահատականները՝ վարկանիշը, այսինքն՝ իրենց կարծիքը փոխառուի կողմից տվյալ բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների ժամանակին և լրիվ ծավալով մարման վերաբերյալ: Ներքին վարկանիշավորման համակարգի ներդրման ժամանակ վարկանիշի գնահատման տարրերն են՝ ռեֆուլտի հավանականությունը (Probability of default, PD), ռեֆուլտի դեպքում հնարավոր ռիսկը (Exposure at default, EAD), ռեֆուլտի դեպքում կորստի մեծությունը (Loss Given default, LGD), անսպասելի (Unexpected losses, UL) և սպասելի կորուստների (Expected losses, EL) գնահատականները: Ներկայում ՀՀ առևտրային բանկերի կողմից ներքին ռեյտինգավորման համակարգի կառուցման գլխավոր խնդիրներից մեկը հաճախորդների գծով կենտրոնացված տեղեկատվության բացակայությունն է, հետևաբար՝ անհրաժեշտ է հավաքագրել հաճախորդների վերաբերյալ կենտրոնացված տեղեկատվություն (այդ թվում նաև նրանց կոմունալ վճարումների, հեռախոսավարների գծով ժամկետային պարտավորությունների մասին)՝ վարկային բյուրոների միջոցով (ՀՀ-ում ներկայում գործում է ՀՀ ԿԲ-ի վարկային ռեգիստրը և ԱՔՌԿ մասնավոր վարկային բյուրոն): Կարծում ենք, որ ներքին վարկանիշավորման համակարգի կայացումը ՀՀ առևտրային բանկերում կնպաստի վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

1. Осипенко Т.В., О системе рисков банковской деятельности, Деньги и кредит, 2000, #4, с. 28.

2. В.Ю. Резниченко, И.В. Цыганкова, Управление финансовыми рисками банка, Учебное пособие, М.: Московский международный институт эконометрики, информатики, финансов и права, 2003, с. 147-156.

3. Ըստ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության համատեղ հաստատած՝ ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձեռնարկման կարգի, 2001 4. Բանկերի վարկային ռիսկերի կառավարման մեթոդական ուղեցույց, Վարկային ռիսկի հաշվարկ,

Հաստատված ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007թ. թիվ 39-Ն որոշմամբ  
5. Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, Կանոնակարգ 2, ընդունված 31/03/08

6. Basel Committee on Banking Supervision, International Convergence of Capital Measurement and Capital Standards, A Revised Framework, CH-4002 Basel, Switzerland, Updated November 2005, pp. 15-139.